ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1964 Общественные науки

Մ. Լ. Հովհաննիսյան

ՌԵՉ ՊՈՍՊՈԼԻՏԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՕՐԳԱՆՆԵՐԸ

Հայտնի է, որ հայերը արևմտաուկրաինական հողերում երևացել են դեռևս Գալիցիա-Վոլինյան իշխանության գոյության ժամանակաշրջանում (X—XIV դդ.)։ Գալիցյան իշխաններից էլ նրանք ստացան ինքնավարության իրավունք և ստեղծեցին իրենց ազգային ինքնավար հիմնարկությունները։

XIV դ. կեսերին այդ իշխանության տերիտորիան միացվեց լեհական պետությանը։ Սակայն լեհական տիրապետության հաստատումը քիչ թե շատ էական փոփոխություններ չմտցրեց հայերի ինքնավարության իրավունքի մեջ. հայկական օրգանները առաջվա պես շարունակեցին կատարել այն չորս հիմնական ֆունկցիաները, որոնց քննարկմանն է նվիրված սույն հոդվածը։

Որոնք էին այդ ֆունկցիաները։

Եթե դատելու լինենք այն արտոնագրերից (przywilei), որոնց համաձայն հայերը ձեռք բերեցին Ռեչ Պոսպոլիտայի քաղաքներում ինքնավար օրգաններ ունեցող ազգային համայնքներ ստեղծելու իրավունք, ապա դուրս կգա, որ Լեհաստանի հայերի ինքնավարության իրավունքը հանգում էր լոկ ինքնուրույն դատական իշխանության իրականացմանը, իշխանություն, որն զգալիորեն սահմանափակված էր քաղաքի տիրակալի կամքով և լեհական պետության օրենքներով։

Արդ, լեհ թագավոր Կազիմիր III 1356 թ. հունիսի 17-ի հայտնի արտոնագրում ասված է, որ Լվովի հայերը մյուս ոչ-կաթոլիկ ազգությունների հետ մեկտեղ «իրավունք ունեն քննել սեփական գործերը և դրանց վերաբերյալ վճիռներ կայացնել իրենց իսկ ժողովրդի իրավունքի հիման վրա...»[1]։ Ինչպես տեսնում ենք, խոսքն այստեղ վերաբերում է դատական ենթակայությանը և դատարանավարությանը միայն։ Եթե ծանոթանանք նման կարգի այլ արտոնագրերի բովանդակությանը, նույնը կգտնենք նաև այնտեղ։

Սակայն դա միայն առաջին տպավորությունն է. հայկական ինքնավար օրգանների պրակտիկ գործունեության վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ օրգանների ֆունկցիաները բոլորովին չեն սահմանափակվել սոսկ դատական բնույթի հարցերով։ Կարելի է նույնիսկ ենթադրել, որ այդ օրգանները սկզբնապես, Գալիցիա-Վոլինյան իշխանության գոյության ժամանակաշրջանում առաջ են եկել որպես ոչ այնքան դատական, որքան հասարակական-վարչական իշխանություն, ճիշտ է, բավականաչափ սահմանափակ իրավունքներով։ Դատական ֆունկցիան նրանք, ամենայն հավանականությամբ, ձեռք բերեցին ավելի ուշ շրջանում, երբ Լվովում, Կամենեց-Պոդոլսկում և այլ քաղաքներում առաջացել էին խոշոր և տնտեսապես զորեղ հայ համայնքներ (XIII դ. երկրորդ կես—XIV դ. առաջին կես)։

---

[1] A. Czołowski, Pogląd na organizację i działalnosc dawnych władz miasta Lwowa do 1848 r., Lwow, 1896, էջ 9։

Ինչ վերաբերում է լեհական տիրապետության շրջանում այդ օրգանների կատարած ֆունկցիաներին, ապա լեհ բուրժուական խոշոր իրավագետ Օսվալդ Բալցերի կարծիքով Լվովի հայկական վոյտությունը (XIV դ. 50-ական թվ. – 1469 թ.) հայկական համայնքում դատական իշխանությունը իրականացնելու հետ մեկտեղ, կատարում էր նաև մի շարք այլ ֆունկցիաներ։ Օրինակ, Լվովի հայոց վոյտը հանդիսանում էր այսպես կոչված iudicium generala-ի անդամ[3]։ Դա մի դատարան էր, որը կազմված էր ռուսական վոյեվոդության հասարակության դանդաղ ներկայացուցիչներից իրենից իսկ՝ վոյեվոդից, երկու եպիսկոպոսներից, մի քանի շլյախտիչներից ու քաղաքացիներից, ինչպես նաև հայոց վոյտից։ Դատարանում նախագահում էր թագավորական «ստարոստան». դատարանի իրավասության մեջ պատկանում հիմնականում շլյախտայի հողային սեփականության վերաբերյալ գործերը[4]։ Սակայն Լվովի քաղաքացիների և հայերի մասնակցությունը դատարանում խոսում է այն մասին, որ այդտեղ քննվում էին նաև նրանց դատական գործերը։

Այսպիսով, ըստ Բալցերի, հայոց վոյտը որպես հայ ինքնավարության դեկավար մասնակցում էր ամբողջ վոյեվոդության դատական գործերի քննարկմանը։ Բալցերը ցույց է տվել նաև, որ Լվովի հայկական վոյտությունը լեհական իշխանությունների առջև հանդես էր գալիս որպես հայկական համայնքի ներկայացուցիչ, ինչպես նաև որպես անչափահասների խնամակալ, կտակներ անորինող, լիազոր անձ՝ իրավական հարցերի քննարկման ժամանակ և այլն[5]։

Սակայն Բալցերը նշում է միայն Լվովի հայոց ինքնավար օրգանի ֆունկցիաները։ Մինչդեռ Արևմտյան Ուկրաինայի բոլոր հայաբնակ քաղաքների հայկական ինքնավար օրգանների գործունեության վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզորոշ կերպով տարբերել չորս հիմնական ֆունկցիաներ. 1. դատական իշխանության իրականացումը հայկական համայնքում, 2. լեհական իշխանությունների առջև համայնքի, ինչպես նաև նրա առանձին անդամների և խմբերի ներկայացուցչություն, 3. իրավարանական միջնորդությունը առևտրա-ֆինանսական և քաղաքացիական գործարքներում, 4. հայկական եկեղեցու գործերի դեկավարությունը։

Այդ ֆունկցիաներից ամենազլխավորը, իհարկե, դատական ֆունկցիան էր, որի իրականացման իրավունքից օգտվում էին բոլոր քաղաքների հայկական ինքնավար օրգանները։

Հայկական օրգանների դատական իշխանությունը տարածվում էր այն հայերի վրա, որոնք մշտական բնակություն էին հաստատել Ռեչ Պոսպոլիտայի քաղաքներում, բացառությամբ միայն նրանց, ովքեր կաթոլիկություն էին ընդունել կամ օգտվում էին գերմանական իրավունքից։ Սակայն այս վերջինների թիվը մինչև եկեղեցական բոնի սիությունը (XVII դ. կեսերը) այնքան էլ մեծ չէր։

Հայոց դատարանում որպես գլխավոր դատավոր հանդես էր գալիս հայոց վոյտը, որը պարտավոր էր լավ իմանալ հայկական ստատուտի օրենքները[6]։

---

[3] O. Balzer, Sądownictwo ormiańskie w średniowiecznym Lwowie, Lwów, 1909, էջ 41։

[3] Այդպես էր կոչվում Գալիցյան Ռուսիան լեհական թագավորության կազմում։

[4] Balzer, Sądownictwo, էջ 176—177։

[5] Նույն տեղում, էջ 43։

[6] Այսպես էր կոչվում Մխիթար Գոշի պատաստանագրքի Լեհաստանում կիրառություն գտած տարբերակը։

Դատարանի անդամներ կամ երդվյալ դատավորներ էին հայ ավագները կամ լավնիկները[7], որոնց թիվը տարբեր ժամանակներում ու տարբեր քաղաքներում տարբեր էր։ Մի հին արձանագրության մեջ, օրինակ, նշվում է, որ 1444 թ. Լվովի հայկական դատարանի անդամներն էին՝ Mikolaj-ը, Jakob Fasser-ը, Kacryko Telakowicz-ը, Bohdan-ը, et alii seniores consilii Armenorum[8], այսինքն՝ ավելի քան չորս հոգի։ Նման մի ուրիշ արձանագրությունից (1489 թ.) երևում է, որ նրանք արդեն վեց հոգի էին (Telak, Chaczerysz, Iwaschko, Almas, Lazar et Dimosch)[9]։ 1563 թ., ինչպես այդ վկայում է լեհ թագավոր Սիգիզմունդ Ավգուստի դեկրետը, Լվովի հայոց դատարանը բաղկացած էր 12 անդամից։ Ըստ որում մեկ տարի աշխատում էին վեցը, իսկ հետևյալ տարին նրանց փոխարինում էին մյուս վեցը[10]։ Դատարանի կազմի կեսի ամենամյա փոփոխության պրակտիկան թելադրվում էր նրանից, որ հայոց դատավորները լինելով առևտրականներ, չէին կարող մշտապես քաղաքում գտնվել։ Այդ պատճառով էլ մեկ տարի նրանք աշխատում էին, իսկ մյուս տարին կարող էին իրենց առևտրական գործերով բացակայել քաղաքից։

XVII—XVIII դդ. նույնպիսի կազմ ունեին նաև Ստանիսլավի (ներկայումս Իվանովո-Ֆրանկովո)[11], Ռաշկովի[12], Յազլովեցի[13] հայկական դատարանները։ Բայց Կամենեց-Պոդոլսկում, Զամոստյեում և մի շարք այլ վայրերում կային արդեն ավելի պակաս թվով դատավորներ։ Օրինակ, Կամենեցում նրանց թիվը հասնում էր ութի[14], Զամոստյեում 1626 թ.՝ չորսի, իսկ 1636 թ.՝ տասի[15]։ Դատարանի իրավասության համար պարտադիր չէր համարվում նրա բոլոր անդամների ներկայությունը։ Զամոստյեում պարտադիր կերպով դատական նիստին մասնակցող դատավորների թիվը կախված էր քննարկվող գործի կարևորությունից։ Դեպքեր էին լինում, երբ Զամոստյեի հայոց վոյտը դատում էր նույնիսկ երկու լավնիկների ներկայությամբ („lewiori momenti")[16]։ Լվովում այս անհրաժեշտ մինիմումը կազմում էր չորս դատավոր[17]։ Դատական նիստին վոյտի մշտական մասնակցությունը նմանապես պարտադիր չէր, քանի որ նա նույնպես առևտրական գործերով էր զբաղվում։ Վոյտի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում էր իր տեղակալը կամ երեցփոխանը, որը նման դեպքերում ստանում էր վոյտի նշանը։ Երբ բացակայում էին

[7] Լեհերեն՝ դատավոր։

[8] Ուկրաինական ՍՍՌ ԳԱ Լվովի գրադարան, ձեռագրերի բաժին, akta grodzkie i ziemskie, հ. XIV, № 1151։

[9] Նույն տեղում, akta grodzkie i ziemskie, հ. XV, № 2039։

[10] Jan Ptaśnik, Walki o demokratizację Lwowa od XVI do XVIII wieku, (Kwart. hist., rocznik XXXIX, zeszyt 2), Lwów, 1925, էջ 250։

[11] Cz. Chowaniec, Ormianie w Stanislawowie w XVII i XVII wieku, Stanislawów, 1928 (էջերը չի նշված)։

[12] Մ. Բժշկեանց, Ճանապարհորդութիւն 'ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 165։

[13] S. Barącz, Rys dziejow ormianskich, Ternopol, 1890, էջ 90։

[14] T. Gromnicki, Ormianie w Polsce, ich historja, prawa i przywileje. Warszawa, 1889, էջ 70։

[15] M. Zakrzewska-Dubasowa, Organizacja gminy ormianskiej w Zamosciu w XVI—XVIII wieku (Rocznik lubelski, III, Lublin, 1960), էջ 73—74։

[16] Նույն տեղում, էջ 73—74։

[17] T. Gromnicki, նշվ. աշխ., էջ 95—96։

18 Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Երևան, 1963, էջ 329։

և վոյտը և երեցփոխանը, դատարանի անդամները իրենք վոյտի պարտականությունների ժամանակավոր կատարող էին նշանակում։ Ընդ որում նա, ով փոխարինում էր վոյտին, ըստ երևույթին, ինքն էլ կոչվում էր վոյտ։ Միայն այսպես կարելի է բացատրել այն փաստը, որ դատական արձանագրություններում չափազանց կարճ ժամանակամիջոցում որպես վոյտ հանդես են գալիս տարբեր անձնավորություններ, թեև հայտնի է, որ վոյտը ընտրվում էր առնվազն մեկ տարի ժամկետով։ Այսպես, օրինակ, Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի նիստերում հանդես են գալիս՝ 1574 թ. հուլիսի 16-ին վոյտ Դեմյանը, 1574 թ. հուլիսի 27-ին՝ վոյտ Սարգիսը, 1574 թ. հուլիսի 29-ին՝ նորից վոյտ Դեմյանը, 1574 թ. օգոստոսի 2-ին՝ վոյտ Սարդիս Զախնոն, 1574 թ. սեպտեմբերի 7-ին՝ վոյտ Տեմուշը[19]։ Վոյտի բացակայության դեպքում, եթե նրան փոխարինողը թույլ էր տալիս անվայել արարք, ապա դատարանը իրավասու էր որոշում ընդունելու նրան փոխելու մասին[20]։

Դատական նիստը բացում էր վոյտը, ավանդական ճառ արտասանելով՝ դատական պրոցեսը արդարացի վարելու մասին։ Դատը սկսվում էր միայն այն ժամանակ, երբ ներկա էին լինում շահագրգռված երկու կողմերը։ Սկզբում լսում էին հայցվորի (aktor) բողոքը և մեղադրյալի (pozwany) բացատրությունները, ապա իրենց ցուցմունքներով հանդես էին գալիս վկաները։ Այնուհետև դատարանն անցնում էր գործի քննարկմանը և դատավճռի կայացմանը[21]։ Ինչպես մեղադրական ելույթը և մեղադրյալի բացատրությունները, նույնպես և վկաների ցուցմունքներն ու դատարանի կայացրած վճիռը արձանագրվում էին դատարանի մատյաններում և վավերացվում հայկական դատարանի կնիքով։ Եթե դատավճիռը չէր բավարարում կողմերից մեկին, ապա սա իրավունք ուներ բողոքարկել այն։

Հայկական դատարանները ղեկավարվում էին Մխիթար Գոշի Դատաստանագրքի օրենքներով։ Այդ օրենսգիրքը որոշ ազդեցություն էր կրել Ռեչ Պոսպոլիտայի քաղաքների մեծ մասում կիրառվող մագդեբուրգյան կամ գերմանական իրավունքից, որոշ փոփոխություններ էլ այնտեղ մտցրել էր լեհ թագավոր Սիգիզմունդ I, 1519 թ. լեհական սեյմում այդ դատաստանագիրքը հաստատելու կապակցությամբ։ XIX դ. կեսերին, երբ հայկական դատարանը վաղուց ի վեր լուծարքի էր ենթարկվել ավստրիական իշխանությունների կողմից, հայկական ստատուտով սկսեցին հետաքրքրվել լեհ. ավստրիացի և գերմանացի հետազոտողները։ Դրա շնորհիվ, նրա տեքստը լատիներեն և լեհերեն լեզվով հրատարակվեց Վ. Վոյչիցկու[22], Ս. Բարոնչի[23], Օ. Բալցերի[24] և ուրիշների կողմից[25]։

19 Նույն տեղում, էջ 263, 265, 266, 272, 276։

20 Նույն տեղում, էջ 329, № 549։

21 Մ. Բժշկեանց, նշված աշխատ., էջ 172—175։

22 K. Wl. Wojcicki. Biblioteka starożytna pisarzy polskich, I, 1843, էջ 31—137։

23 S. Barącz, Rys drzejow ormiańskich, Ternopol, 1869.

24 Studia nad historią prawa polskiego. հ. III, Լվով, 1906, էջ 401—538։

25 Անհրաժեշտ է նշել, որ բոլոր այդ հրատարակությունները, որոնք ի դեպ, կրում են բուրժուա-կղերական պատմագրության կնիքը այսօր չեն կարող մեզ բավարարել։ Այսպիսով, Մխիթար Գոշի Դատաստանագրքի տարբերակներից մեկը՝ միջնադարյան հայկական իրավունքի այդ բացառիկ, արժեքավոր հուշարձանը, որին վիճակված էր հարյուրամյակների ընթացքում հիմք հանդիսանալ Ռեչ Պոսպոլիտայի հայկական գաղութի դատա-իրավական հարաբերությունների կարգավորման համար, մինչև այժմ համարյա անհայտ է մեր հանրապետության գիտական աշխատողների լայն շրջաններին, բանի որ այն երբեք չի հրատարակվել հայերեն կամ ռուսերեն

* * *

Արխիվային բազմաթիվ նյութեր ցույց են տալիս, որ հայկական ինքնավար օրգանների ղեկավարները դատական ֆունկցիայի իրականացման հետ մեկտեղ հաճախ տարբեր հարցերի կապակցությամբ հանդես էին գալիս լեհական իշխանությունների առջև որպես հայկական համայնքի ներկայացուցիչներ։ Այս նոր դերում հայ ինքնավար օրգանների ղեկավարներին ամենից շատ մենք տեսնում ենք լեհական թագավորների թագադրության ժամանակ։ Ժամանելով Կրակով կամ Վարշավա, հայ համայնքների ներկայացուցիչները նորընտիր թագավորին հավաստիացնում էին, որ հայերը միշտ հավատարիմ կմնան Ռեչ Պոսպոլիտային։ Անհրաժեշտության դեպքում նրանք հենց այդտեղ էլ թագավորին էին ներկայացնում իրենց համայնքների խնդրագրերը իրավունքների ընդլայնման կամ առևտրի ու արհեստագործության պայմանների բարելավման մասին։

Տեղեկություններ կան այն մասին, որ Կամենեց-Պոդոլսկում հայ ինքնավար օրգանների ընտրության ժամանակ ընտրում էին նաև մեկ պատգամավոր, որի միակ պարտականությունն էր Կամենեցի հայերի անունից մասնակցել լեհ թագավորների թագադրությանը[26]։ Ըստ Լեհաստանում գոյություն ունեցող սովորությունների՝ յուրաքանչյուր նորընտիր թագավոր իր անունից հաստատում էր այն բոլոր շնորհներն ու արտոնությունները, որոնք տրվել էին իր մերձավոր և հեռավոր նախորդների կողմից առանձին քաղաքների, առանձին համքարությունների, առևտրական կորպորացիաների և նույնիսկ առանձին անձանց։ Այդ պատճառով էլ, թագավորների փոփոխությունից հետո բոլոր արտոնագրերը ներկայացվում էին նորընտիր թագավորի հաստատմանը։ Այդ բանում հատկապես շահագրգռված էին հայերը, որովհետև նրանց իրավունքների վրա մշտապես ոտնձգություններ էին կատարում լեհական մագիստրատները։

1633 թ. մեկնելով Վլադիսլավ IV թագադրությանը, Լվովի հայ ինքնավարության ներկայացուցիչներ Քրիշտոֆ (Քրիստափոր) Թումանովիչը և Դանիել Հոլուբովիչը թագավորին հավատարմության երդում են տալիս և նույն թվականի մարտի 10-ին ստանում Լվովի հայերի բոլոր արտոնագրերի հաստատումը[27]։

Հայ պատգամավորները թագավորին էին ներկայանում ոչ միայն իրենց արտոնագրերի և իրավունքների հաստատման, այլև նորերը ստանալու նպատակով։ Այդ բանի համար հայ համայնքներում ընտրում էին մեկ կամ երկու վստահելի անձ, որոնց հաստատում էին հայկական մագիստրատում կամ դատարանում, ապա նրանց տալիս էին որոշ քանակությամբ դրամ կամ արժեքավոր իրեր (գորգեր կամ թանկարժեք առարկաներ), հավանաբար, նվերների համար և հատուկ նամակով դրանց ուղարկում Կրակով կամ Վարշավա։ Օրինակ, Կամենեց-Պոդոլսկի հայկական մագիստրատը նման հարցեր է քննարկել 1567 թ. ապրիլի 14-ի և 1574 թ. փետրվարի 12-ի իր նիստերում։ Առաջին դեպքում մագիստրատը որոշել է Սիգիզմունդ Ավգուստ թագավորի մոտ ուղարկել

լեզուներով։ Կարծում ենք, որ իրավունքի պատմության մեր մասնագետները կհետաքրքրվեն այդ հարցով և, վերջապես, կիրականացնեն հայկական սուտատուի հայերեն թարգմանությունը և տպագրությունը։

[26] Antoni J., Nowe opowiadanie historyczne, Lwów, 1883, էջ 142—143։

[27] S. Barącz, նշվ. աշխատ., էջ 121—122։

պան Կյուրեղին, տալով «նրան և ուղեկից անձանց 205 լեհական ֆլորին և չորս գորգ զանազան նվերների համար»[28]։ Երկրորդ դեպքում թագավորի մոտ է ուղարկվել երդվյալ դատավոր (լավնիկ) Մելքոնը, որը ծախսերի համար ստացել է լեհական 60 և լիտվական 3 ֆլորին[29]։

Հայկական ինքնավարության ղեկավարները ընդունելություններ էին կազմակերպում ի պատիվ լեհ և օտարազգի բարձրաստիճան հյուրերի։ Լվովի հայ ավագները հաճախակի էին ընդունում թագավորական խորհրդականներին, հատուկ կոմիսարներին, վոյեվոդին և ուրիշների։ 1497 թ. նրանք ճոխ ընդունելություն կատարեցին նույնիսկ ի պատիվ խաչակիրների օրդենի մեծ մագիստրոս Իոհան Տյեֆենցու, որը պատերազմելու էր մեկնում թուրքերի դեմ[30]։ Նման մի ընդունելություն կազմակերպեց 1572 թ. սեպտեմբերի 18-ին Կամենեցի հայ ղեկավարությունը ի պատիվ Վալախիայի վոյեվոդ Բոդդանի, որն այդ ժամանակ հյուրընկալվում էր Պոդոլյեի ստարոստա իշխան Պոտոցկու մոտ[31]։ Կենսականորեն շահագրգռված լինելով առևտրի և արհեստագործության պայմանների բարելավմամբ, լեհահայերը այդպիսի ընդունելություններ կազմակերպում էին այս կամ այն իշխանի պատվին ի նշան երախտագիտության՝ հայերին այդ գործում ցույց տված օգնության և օժանդակության։

Բերված փաստերից պարզ երևում է, որ դատական իշխանության իրականացման հետ մեկտեղ, հայկական ինքնավար օրգանները հայ համայնքին վերաբերող քաղաքական, տնտեսական և այլ հարցերում հանդես էին գալիս որպես այդ համայնքի ներկայացուցիչներ։ Այդ փաստերը հաստատում են, որ հայ համայնքների ներկայացուցչությունը հայ ինքնավար օրգանների գործունեության չափազանց կարևոր բնագավառներից մեկն էր։ Հայ օրգանների այս նոր դերը այնքան սովորական ու անհրաժեշտ էր դարձել, որ առանց որևէ առարկության այն ճանաչում էր գտել լեհական բարձր իշխանությունների կողմից։ Հայ համայնքին վերաբերող հարցերում լեհ իշխանությունները հաշվի էին նստում ինքնավար օրգանների ղեկավարության հետ։ Ահա մի փաստ։ Հայտնի է, որ հայերի, ուկրաինացիների և ոչ-կաթոլիկ մյուս ազգությունների համեմատությամբ Ռեչ Պոսպոլիտայի քաղաքներում լեհերն ու գերմանացիները օգտվում էին անհամեմատ լայն իրավունքներից։ Դրեթե նույնպիսի առևտրական իրավունքներից էին օգտվում նաև այն հույները, որոնք օգտվում էին գերմանական իրավունքից։ XVII դ. սկզբներին, երբ ավելի հաճախ էին հայերը հայոց իրավունքից անցնում գերմանականին, որը, անկասկած, սպառնում էր հայ համայնքի գոյությանը, Լվովի հայ ավագները խնդրեցին թագավորին արգելել այդ անցումները։ Դրան հետևած թագավորական դեկրետի հիման վրա Լվովի քաղաքային խորհուրդը (rada miejska) որոշեց խստիվ արգելել հայերի գերմանական իրավունքներին անցնելն առանց հայ ավագանու համաձայնության հանձնարարության[32]։ Իսկ 1679 թ. 3ան Սոբեսկի թագավորը Լվովի քաղաքային խորհրդին հրամայեց հայերի վրա հարկեր և տուրքեր չդնել առանց հայ

28 Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները, էջ 95, № 6։
29 Նույն տեղում, էջ 212, № 245։
30 S. Barącz. Rys. էջ 109—110։
31 Ղ. Ալիշան, Կամենեց, Վենետիկ, 1896, էջ 41։
32 Պիշոֆ, Լեհահայոց հին իրավունքը, Վիեննա, 1893, էջ 40։

ավազանու գիտության և համաձայնության։ Այդպես էին լեհ իշխանությունները հաշվի առնում հայ ինքնավար օրգանների կարծիքը։

Այսուհանդերձ լեհ ֆեոդալները այդ օրգանները երբեք չէին նույնացնում տեղական իշխանության օրգանների հետ։ Առհասարակ Ռեչ Պոսպոլիտայի հայերին տրված ինքնավարության իրավունքը նրանց կատարյալ անկախություն չէր ընձեռում։ Հայկական դաղութը մշտապես հետևում էր լեհական պետության հիմնական օրենքներին և ենթարկվում լեհ վերադաս իշխանություններին։ Ներքին ինքնավարության իրավունքը ապահովում էր առանձին հայ համայնքի գոյությունը՝ ազգային իրավական, կրոնական և այլ սովորությունների ու նորմերի հիման վրա։ Այդ իրավունքը հայերին էր ընձեռվել պետության հանդեպ նրանց ունեցած մեծ ծառայությունների համար և, հիմնականում կոչված էր խթանելու հայերի առևտրա-արհեստագործական գործունեությունը, մի բան, որից, ինչպես հայտնի է, չափազանց մեծ օգուտներ էին քաղում լեհական թագավորները, մագնատները ու շլյախտան։ Լեհ ֆեոդալ-քաղաքատերերը հայերին տրված իրենց արտոնագրերում մշտապես ընդգծում էին այն միտքը, որ հայերին բնակության հրավիրելով իրենց քաղաքներում, իրենք նպատակ ունեն նրանց միջոցով զարգացնել առևտուրն ու արհեստները, նպաստել իրենց քաղաքների հարստացմանն ու բարգավաճմանը։

Սակայն հայ օրգանները երբեմն փորձեր էին կատարում ընդլայնելու իրենց ֆունկցիաները և ամբողջ քաղաքը ենթարկելու իրենց իշխանությանը։ Այդպիսի մի փորձի մասին մեզ հայտնի է Կամենեց-Պոդոլսկի հայ ինքնավարության գործունեությունը։ 1719 թ. մարտի 26-ին Կամենեցի լեհական քաղաքագլուխ Նիկոլայ Պավլիշը բողոքում էր հայոց վոյտ Միլկովիչի դեմ՝ մեղադրելով նրան լեհական վոյտին ամենևին հաշվի չառնելու, ինքնակամ կերպով ամբողջ քաղաքի կառավարման գործը դավթելու, իր սեփական օրենքները սահմանելու, իրեն և՛ վոյտ, և՛ քաղաքագլուխ, և՛ քաղաքային խորհրդական համարելու մեջ[14]։

Նման դեպքերը, սակայն, ծայրահեղ բացառիկ երևույթ էին, և կոպիտ սխալ կլիներ դրանց հիման վրա չափազանցված ներկայացնել հայ օրգանների իրավասությունը։

Այսպիսով, հանդես գալով հայ համայնքների ներկայացուցիչների դերում, ինքնավար օրգանները կարևոր դեր էին խաղում հայկական համայնքների և լեհական իշխանությունների փոխհարաբերությունների կարգավորման բնագավառում։ Սակայն ինքնավար օրգանները, ինչպես նշեցինք, չէին փոխարինում պետական իշխանությունների օրգաններին։

* * *

Հայ ինքնավար օրգանների գործունեության մեջ նշանակալից տեղ էր գրավում զանազան կտակների, առքի-վաճառքի, ամուսնական պայմանագրերի և նման այլ ակտերի կատարումը։ Հայերի միջև կնքված այդ պայմանագրերն ու համաձայնագրերը իրավական ուժ էին ստանում այն բանից հետո միայն, երբ վավերացվում էին հայկական օրգանների կողմից և արձանագրվում այսպես կոչված ակտային մատյաններում։

Այդ համաձայնագրերը ուժի մեջ մտնելուց հետո հայ օրգանները հետևում էին դրանց իրագործմանը։ Ամուսնական պայմանագրերը սովորաբար կնքվում

[13] S. Barącz, Rys, էջ 127։

[14] Архив Юго-Западной России, մասն V, հ. I, էջ 279—282։

էին փեսացուի և հարսնացուի ծնողների միջև։ Դրանք փոխադարձ պարտավորություններ էին պարունակում ամուսնության պայմանների վերաբերյալ (օժիտ և այլ դրամա-ունեցվածքային հարցեր)[35]։ Այն դեպքում, երբ կողմերից մեկը խախտում էր պայմանագիրը, հայկական օրգանը ակտիվորեն միջամտում էր գործին և խախտող կողմին ստիպում էր կատարել պայմանագիրը։

Դրանից բացի հայ օրգանները գրեթե ամեն օր մասնակցում էին առևտրա-ֆինանսական համաձայնագրերի և գործարքների կնքմանը։ Օրինակ, երբ հայ վաճառականը իր ապրանքը վաճառում էր ապառիկ, գնորդի հետ միասին նա ներկայանում էր հայոց մադիսորատ կամ դատարան և այդ մասին հայտարարություն անում։ Հենց այդտեղ էլ գնորդը պարտավորություն էր ստանձնում գնված ապրանքի արժեքի մուծման ժամկետի վերաբերյալ։ Երբեմն վաճառողի կամքով հայոց դատարանը իր վրա էր վերցնում վաճառված ապրանքի արժեքը ստանալու պարտականությունը[36]։

Նման պայմանագրային բազմաթիվ գործերում հայոց օրգանները հանդես են գալիս միջնորդի, արբիտրի դերում։ Դա էլ հանդիսանում էր այդ օրգանների երրորդ հիմնական ֆունկցիան։ Ի միջի այլոց, երբեմն չափազանց դժվար է գտնել այն սահմանագիծը, ուր ավարտվում էր հայ օրգանների դատական ֆունկցիան և սկսվում այս նոր, միջնորդության ֆունկցիան, քանի որ դրանք իրենց բնույթով միմյանց շատ մոտիկ էին։ Տարբերությունը, այնուամենայնիվ, կայանում էր նրանում, որ տվյալ երրորդ ֆունկցիան վերաբերում էր բացառապես պայմանագրային գործերին։ Բացի այդ պայմանագրերի կնքման և վավերացման դեպքում պարտադիր էր դատարանի բոլոր ատրիբուտների և պայմանների առկայությունն ու պահպանումը (դատարանի անդամների, վկաների ներկա լինելը և այլն)։ Գործը դատական բնույթ էր ստանում միայն այն դեպքում, երբ խախտվում էր պայմանագիրը և այդ մասին բողոք ներկայացվում դատարանին։

Այսպիսով, դատական և միջնորդական ֆունկցիաների իրականացման շնորհիվ հայոց օրգանները հնարավորություն էին ստանում միջամտելու տեղի հայերի տնտեսական, քաղաքացիական, գույքային և այլ հարաբերություններին, դրանց վրա ակտիվորեն ներգործելով օրենքի ուժով։ Այդ ֆունկցիաների կատարումը մեծացնում էր հայ ինքնավար օրգանների նշանակությունը գաղութի սոցիալ-տնտեսական կյանքում։

* * *

Ինքնավար օրգանների չորրորդ հիմնական ֆունկցիան անխզելիորեն կապված էր եկեղեցու գործունեության հետ։ Այդ ֆունկցիայի վերաբերյալ նյութերը մեր առջև բացում են մի չափազանց հետաքրքիր պատկեր։ Պարզվում է, որ Ռեչ Պոսպոլիտայի հայ եկեղեցու իրավական վիճակը մեծ չափով տարբերվում էր միջնադարյան Հայաստանում գտնվող եկեղեցիների դրությունից։ Հայտնի է, որ Հայաստանում XV—XVIII դդ. եկեղեցիները իրենց ներքին գործերում ինքնուրույն էին (չհաշված նվաճողների անօրինական ոտնձգությունները)։ Ռեչ Պոսպոլիտայում սակայն այդ ինքնուրույնությունը սահմանափակված էր միայն այն հարցերի շրջանակներով, որոնք բացառապես վերաբերում էին կրոնական ծիսակատարություններին։ Մյուս բոլոր հարցերում նրանք լիովին ենթարկվում

[35] Կամենեց-Պոդոլսկի հայ դատ. արձանագր., էջ 189—190, № 450։
[36] C. Balzer, նշված աշխ. էջ 44—45։

էին հայ ինքնավար օրգաններին։ Այսպես, օրինակ, նրանք եկեղեցական ունեցվածքի վրա կարգադրություն անելու իրավունք չունեին, որովհետև այն համարվում էր հայ բնակչության սեփականություն և, այդ պատճառով էլ գտնվում էր համայնքների աշխարհիկ ղեկավարների տնօրինության տակ։ Լվովի հայկական եպիսկոպոսությունը ինքնուրույն չէր և գործում էր հայ ավագանու համաձայնությամբ նույնիսկ զուտ եկեղեցական այնպիսի հարցերում, ինչպիսիք էին կղերականների նկատմամբ դատավարության իրականացումը և առանձին եկեղեցիների հոգևոր ղեկավարներ նշանակելը։ Եկեղեցու և հայ ինքնավար օրգանների միջև նման հարաբերությունների վկայություն է Խաչատուր եպիսկոպոսի «խոստումը», որ նա տվել է 1467 թ. Լվովի հայ եկեղեցու առաջնորդ ընտրվելու առթիվ։ Այդ «խոստման» մեջ մենք կարդում ենք հետևյալը. «Եվ ես նվաստ եպիսկոպոս Խաչատուր խոստացա կատարել առաջի Աստծո. նախ՝ եկեղեցիներին և ընչիցն հրաման չանենք՝ առանց տանուտերաց հրամանին։ Ը, որ քահանայից մտոցն ձեռնամուխ չի լինիմք։ Եւ ոչ նոքա իմ մուտքաց, որպէս առաջի հայրապետութեան ժամն էր։ Գ, որ զայս տեղացս իրիցանուն զդատն ու դատաստանն ի տեղս այնենք հետ տանուտիրացն եւ այլ տեղ չի ձենենք, Դ, որ զքահանա կամ զսարկավագ առանց տանուտիրաց հրամանին չի այնենք։ Եւ որ անհասուկ խնամություն կամ այլ անհաս բան կաշառքով չանենք. այլ թէ մահու թէ կենայ ինչ որ յուտեանց կարեացն հոգվո բաժին հանեն, կամ տան՝ զայն առնունք. եվ այլ աւելի չպահանջենք։ Այլ եւ եկեղեցական եւ հայրապետ դնելու հրամանք չանենք առանց տանուտիրացն հրամանին։ Եւ այլ ինչ բան որ լինայ կամ դատաստան հոգևոր կամ մարմնաւոր, առանց տանուտիրացն չայնենքզ»։

Նման խոստումները սովորական երևույթ էին Լեհաստանի հայկական գաղութի կյանքում։ Դրանք տրվում էին գրավոր՝ որպես գաղութի առջև եպիսկոպոսի պարտավորություն[38]։ Հենց միայն այն փաստը, որ պաշտոնին անցնելու ժամանակ Լվովի հայ եկեղեցու առաջնորդները որոշակի պարտավորություններ էին ստանձնում Լվովի հայ ավագանու առջև, պարզորոշ կերպով վկայում է եկեղեցու նկատմամբ հայ աշխարհիկ հիմնարկների ունեցած ղեկավարդերի մասին։

Մի շարք աղբյուրներ ուղղակի ցույց են տալիս, որ հայ ինքնավար օրգանները եկեղեցու նկատմամբ իրենց վերահսկողությունը իրականացնում էին հատուկ օրգանի միջոցով, որը կազմված էր այսպես կոչված պրովիզորներից (prowizor)՝ վոյտի տեղակալ երեցփոխանի գլխավորությամբ։ Այս օրգանը զբաղվում էր եկեղեցիների, վանքերի և այլ կրոնական շինությունների վերանորոգման և շինարարության հարցերով, ինքնավարության ղեկավարության անունից կարգադրություններ էր անում եկեղեցու ունեցվածքի և նյութական միջոցների տնօրինության վերաբերյալ, տոնական օրերի և հանդիսավոր ծիսակատարությունների համար պահում էր երաժիշտների և երգիչների խումբ և այլն։ Նույնիսկ մատաղի համար նախատեսված անասունները բաց էին թողնվում միայն այս օրգանի կարգադրությամբ[39]։

37 Գ. Ա. Ա., Նիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին Հայկազանց Լեհաստանի ի Կաթողիկոսութիւն, «Արարատ» (ամսագիր), Վաղարշապատ, 1877, էջ 47—48։

38 T. Gromnicki, Նշված աշխ., էջ 16—17։

39 M. Zakrzewska-Dubasowa, Նշված աշխ., էջ 113։

Եկեղեցու նկատմամբ հայ ինքնավար օրգանների ղեկավար դերը հատկապես մեծացավ բռնի եկեղեցական միության դեմ հայ բնակչության մղած պայքարի նախնական շրջանում (XVII դ. առաջին կես)։ Հենվելով հայ լայն զանգվածների աջակցության վրա, ինքնավարության ղեկավարները պաշտպանում էին հայ եկեղեցու ինքնուրույնությունը, ծանր պայքար էին մղում ճիզվիտների և ամբողջ կաթոլիկ ռեակցիայի դեմ, որոնք ձգտում էին հայերի շրջանում բռնի կերպով կաթոլիկություն սերմանել։ Ըստ էության, դա ազգապահպանման համար մղվող պայքար էր։ 1630 թ. պաշտպանելով հայ բնակչության ցասումնալի բողոքը ընդդեմ անօրինական ճանապարհով Լվովի առաջնորդարանը զավթած Նիկոլ եպիսկոպոս Թորոսովիչի սանձարձակությունների, Լվովի հայ ինքնավարության ղեկավարությունը արգելեց դավաճան եպիսկոպոսի մուտքը հայոց եկեղեցի և դատական գործ բացեց նրա դեմ։ Միայն Թորոսովիչի կողմից օգնության կանչված լեհական զորքը և կաթոլիկ ռեակցիան դավաճանին փրկեցին ժողովրդի արդարացի դատից։

Չնայած իրենց քաղաքական և կրոնական իրավունքների համար մղած պայքարին, այդ անհավասար մարտում հայերն, այնուամենայնիվ, ստիպված եղան նահանջել և ի վերջո ընդունել հայ եկեղեցու միությունը Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ։ Սակայն նույնիսկ դրանից հետո հայ ինքնավար օրգանները պահպանեցին իրենց ղեկավար դերը եկեղեցու նկատմամբ։ Օրինակ, 1665 թ. ցանկանալով երկու խրճիթ կառուցել կաթոլիկ հոգևորական Կղեմես Գալանոսի համար Նիկոլ եպիսկոպոսը հարկադրված էր խնդրել հայ ավագանու համաձայնությունը[40]։

Բայց XVII դ. երկրորդ կեսին՝ հայ եկեղեցու վրա Հռոմի եկեղեցու ազդեցության ուժեղացման հետևանքով, այն դուրս եկավ հայ ինքնավար օրգանների ենթակայությունից։ 1684 թ. Լվով ժամանած կաթոլիկ եպիսկոպոս Դեոդատ Ներսեսովիչը Լվովի հայ ավագանուն հեռացրեց եկեղեցու գործերի ղեկավարությունից, իսկ հետևյալ տարին նրանից վերցրեց եկեղեցու պահեստների բանալիները, որոնք, ինչպես վկայում է մի հիշատակարան, «այլևս երբեք նրանց չվերադարձրին»[41]։

Դա մի ծանր հարված էր հայ աշխարհիկ հիմնարկությունների հեղինակությանը, որոնք առանց այն էլ կորցրել էին իրենց երբեմնի նշանակությունը՝ իր քաղաքական և տնտեսական օրհասը ապրող Ռեչ Պոսպոլիտայից հայերի հեռանալու կապակցությամբ։

Հայ ինքնավար օրգանների ղեկավարությունից եկեղեցու դուրս գալը ծայրահեղ բացասական ազդեցություն ունեցավ հայկական գաղութի վրա։ Եկեղեցին դարձավ հլու գործիք Հռոմի և լեհական ռեակցիոն շրջանների ձեռքին, որոնք այն օգտագործեցին լեհահայերի ձուլման (ասիմիլյացիայի) խնդիրը իրականացնելու համար։

Այսպիսով Ռեչ Պոսպոլիտայի հայկական ինքնավարության չորս հիմնական ֆունկցիաները, որոնց շրջանակներում ծավալվում էր ինքնավարության օրգանների ամբողջ գործունեությունը, չափազանց կարևոր դեր էին խաղում լեհահայերի հասարակական-տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում։

---

40 S. Baracz, էջ 121–125

41 Նույն տեղում, էջ 129։

Դրանք, իհարկե, առաջին հերթին կլնում էին հայ առևտրա-արհեստավորական հարուստ վերնախավի շահերից, բայց ինքնրստինքյան հասկանալի է, որ իրավական նորմերի պահպանմամբ որոշակիորեն շահագրգռված էին նաև հասարակության ստորին խավերը (pospolstwo)։

М. Л. Оганесян

ОРГАНЫ АРМЯНСКОГО САМОУПРАВЛЕНИЯ В РЕЧИ ПОСПОЛИТОЙ

Резюме

Согласно привилегиям польских королей и владельцев частно-феодальных городов органы армянского самоуправления Речи Посполитой были призваны осуществлять судебную власть в армянской общине. Однако в действительности, как показывают материалы об их практической деятельности, наряду с этим они выполняли ряд других функций.

1. Первая из них заключалась в осуществлении судебной власти, которая распространялась на армян, проживающих в армянской общине. Исключение составляли лишь те армяне, которые являлись католиками или пользовались немецким городским правом.

Как армянский войт, который председательствовал на суде, так и члены суда (старшие, советники, лавники) избирались в армянской общине и утверждались владельцем города.

Армянский суд действовал на основании армянского статута — польского варианта Судебника Мхитара Гоша.

2. Органы армянского самоуправления часто выступали перед польскими властями в роли представителей армянских общин. От имени общин они принимали участие в коронациях польских королей, представляли владельцам городов просьбы общин о расширении торговых и других прав армян, организовывали приемы в честь высокопоставленных польских и иностранных лиц в знак благодарности за их содействие и поддержку армянам. Представительство общин было второй функцией органов армянского самоуправления. Эта функция нашла признание у польского правительства. Однако правительство никогда не отождествляло органы армянского самоуправления с местными органами власти.

3. Органы армянского самоуправления в качестве посредников принимали активное участие в заключении между армянами договорных актов (акты купли-продажи, брачные договоры и т. п.).

4. Четвертая основная функция органов армянского самоуправления заключалась в повседневном руководстве делами армянской церкви в Речи Посполитой. Армянские церкви были самостоятельны только в осуществлении богослужения, в остальных же вопросах (распределение материальных средств и имущества церквей, назначение духовных глав отдельных церквей и т. д.) они полностью находились в подчинении армянских светских органов.